ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 18 >> հունիսի 2013թվականի N 71 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՏԱՐՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով, հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու 2013թվականի ապրիլի 30-ի <<Մայիսյան տոների կապակցությամբ դրամական օգնություն տրամադրելու մասին>> N 51-Ա որոշման դրույթները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 30–ի <<Մայիսյան տոների կապակցությամբ դրամական օգնություն տրամադրելու մասին>> N 51-Ա որոշման հիման վրա կատարված վճարումները:
2.Գյումրու զինկոմիսարիատի կողմից ներկայացված ճշտված ցուցակների համաձայն Գյումրի համայնքի 2013 թվականի բյուջեի <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> 10/4/1/51 գործառական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից> /4729/ տնտեսագիտական գործառական հոդվածից հատկացնել լրացուցիչ գումար՝ 3 510.0 /երեք միլիոն հինգ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամի չափով:
2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լ.Ջիլավյանին իրականացնել վճարումները, վերջնաժամկետ սահմանելով 2013թվականի հուլիսի 10-ը: Չվճարված գումարները հետ վերադարձնել Գյումրի համայնքի գանձապետական համապատասխան հաշվին:

Կողմ (11) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան_____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ